ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1950 *Общественные науки*

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ Ե. ԿՐԱՇԵՆԻՆՆԻԿՈՎԱՅԻՆ

ԸՆԿ. ԿՐԱՇԵՆԻՆՆԻԿՈՎԱ.

Պատասխանում եմ Ձեր հարցերին:

1. ՀԱՐՑ: Ձեր հոդվածում համոզիչ կերպով ցույց է տրված, որ լեզուն ո՛չ բազիս է, ո՛չ էլ վերնաշենք: Օրինաչա՞փ կլիներ արդյոք կարծել, թե լեզուն և՛ բազիսին, և՛ վերնաշենքին յուրահատուկ երևույթ է, կամ սրդյոք ավելի նի՞շտ կլիներ լեզուն համարել միջանկյալ երևույթ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Իհարկե, լեզվին, որպես հասարակական երևույթի, հատուկ է այն ընդհանուրը, ինչ ներհատուկ է բոլոր հասարակական երևույթներին, այդ թվում բազիսին ու վերնաշենքին, այսինքն՝ լեզուն հասարակությանն սպասարկում է նույնպես, ինչպես որ նրան սպասարկում են բոլոր մյուս հասարակական երևույթները, այդ թվում բազիսը և վերնաշենքը: Բայց դրանով էլ հենց սպառվում է՞այն ընդհանուրը, որը ներհատուկ է բոլոր հասարակական երևույթներին: Այնուհետև սկսվում են լուրջ տարբերությունները հասարակական երևույթնե՞րի միջև:

Բանն այն է, որ հասարակական երևույթները, այդ ընդհանուրից բացի, ունեն իրենց սպեցիֆիկ առանձնահատկությունները, որոնք նրանց տարբերում են միմյանցից և որոնք ամենից ավելի կարևոր են գիտության համար: Բազիսի սպեցիֆիկ առանձնահատկություններն այն են, որ նա հասարակությանն սպասարկում է տնտեսապես: Վերնաշենքի սպեցիֆիկ առանձնահատկություններն այն են, որ նա հասարակությանը սպասարկում է քաղաքական, իրավաբանական, էսթետիկական ու այլ գաղափարներով և հասարակության համար ստեղծում է համապատասխան քաղաքական իրավաբանական և այլ հաստատություններ: Իսկ ո՞րոնք են լեզվի սպեցիֆիկ առանձնահատկությունները, որ նրան տարբերում են մյուս հասարակական երևույթներից: Դրանք այն են, որ լեզուն հասարակությանն սպասարկում է որպես մարդկանց հաղորդակցման միջոց, որպես հասարակության մեջ մտքեր փոխանակելու միջոց, որպես մի միջոց, որը մարդկանց հնարավորություն է տալիս հասկանալու միմյանց և կարգավորելու համատեղ աշխատանքը մարդկային գործունեության բոլոր սֆերաներում՝ ինչպես արտադրության բնագավառում, այնպես էլ տնտեսական հարաբերությունների բնագավառում, ինչպես քաղաքականության բնագավառում, այնպես էլ կուլտուրայի բնագավառում, ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ կենցաղում: Այդ առանձնահատկությունները յուրահատուկ են միայն լեզվին, և հենց այն պատճառով, որ դրանք յուրահատուկ են միայն լեզվին, լեզուն հանդիսանում է ինքնուրույն գիտության՝ լեզվաբանության ուսումնասիրման օբյեկտ: Առանց լեզվի այդ առանձնահատկությունների՝ լեզվաբանությունը կկորցներ ինքնուրույն գոյության իրավունքը:

Կարճ ասած՝ լեզուն չի կարելի դասել ո՛չ բազիսների կարգը, ո՛չ էլ վերնաշենքերի կարգը:

Այն չի կարելի դասել նաև բազիսի ու վերնաշենքի միջև եղած «միջանկյալ» երևույթների կարգը, քանի որ այդպիսի «միջանկյալ» երևույթներ գոյություն չունեն:

Բայց գուցե լեզուն կարելի կլիներ դասել հասարակության արտադրողական ուժերի՞ կարգը, ասենք արտադրության գործիքների կարգը: Իրոք, լեզվի և արտադրության գործիքների միջև գոյություն ունի որոշ անալոգիա. արտադրության գործիքները նույնպես, ինչպես և լեզուն, յուրատեսակ անտարբերություն են ցույց տալիս դասակարգերի նկատմամբ և կարող են հավասարապես սպասարկել հասարակության տարբեր դասակարգերին, ինչպես ճներին, այնպես էլ նորերին: Այս հանգամանքը արդյոք հիմք տալի՞ս է լեզուն դասելու արտադրության գործիքների կարգը: Ոչ, չի տալիս:

Մի ժամանակ Ն. Յա. Մարը, տեսնելով, որ «Լեզուն վերնաշենք է բազիսի վրա» իր ֆորմուլան առարկության է հանդիպում, որոշեց «վերակառուցվել» և հայտարարեց, թե «լեզուն արտադրության գործիք է»: Իրավացի՞ էր արդյոք Ն. Յա. Մարը, լեզուն դասելով արտադրության գործիքների կարգը: Ո՛չ: Նա անտարակույս իրավացի չէր:

Բանն այն է, որ լեզվի և արտադրության գործիքների միջև եղած նմանությունն սպառվում է այն անալոգիայով, որի մասին ես հենց նոր խոսեցի: Բայց դրա փոխարեն լեզվի և արտադրության գործիքների միջև գոյություն ունի արմատական տարբերություն: Այդ տարբերությունն այն է, որ արտադրության գործիքները արտադրում են նյութական բարիքներ, իսկ լեզուն ոչինչ չի արտադրում կամ «արտադրում է» սոսկ միայն բառեր: Ավելի հիշտ, արտադրության գործիքներ ունեցող մարդիկ կարող են արտադրել նյութական բարիքներ, բայց այդ նույն մարդիկ, ունենալով լեզու, բայց չունենալով արտադրության գործիքներ, չե՛ն կարող արտադրել նյութական բարիքներ: Դժվար չէ հասկանալ, որ եթե լեզուն կարողանար նյութական բարիքներ արտադրել, շատախոսները աշխարհի ամենահարուստ մարդիկը կլինեին:

2. ՀԱՐՑ: Մարքսը և Էնգելսը լեզուն բնորոշում են որպես «մտքի անմիջական իրողություն», որպես «պրակտիկ, ...իրական գիտակցություն»: «Գաղափարները,— ասում է Մարքսը,— լեզվից անջատ գոյություն չունեն»: Ձեր կարծիքով լեզվաբանությունը ի՞նչ չափով պետք է զբաղվի լեզվի իմաստային կողմով, սեմանտիկայով և պատմական սեմասիոլոգիայով ու ոնաբանությամբ, թե՞ լեզվաբանությանն առարկան պետք է լինի միայն ձևը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Սեմանտիկան (սեմասիոլոգիան) լեզվաբանության կարևոր մասերից մեկն է: Բառերի ու արտահայտությունների իմաստային կողմը լուրջ նշանակություն ունի լեզվի ուսումնասիրման գործում: Այդ պատճառով էլ լեզվաբանության մեջ սեմանտիկային (սեմասիոլոգիային) պետք է պատշաճ տեղ ապահովվի:

Սակայն, մշակելով սեմանտիկայի հարցերը և օգտագործելով նրա տվյալները, ոչ մի կերպ չի կարելի գերագնահատել նրա նշանակությունը, ու, առավել ևս. չի կարելի այն շարաշահել: Ես նկատի ունեմ որոշ լեզվաբանների, որոնք չափից ավելի տարվելով սեմանտիկայով, արհամարհում են լեզուն, որպես «մտքի անմիջական իրողություն», որն անխզելիորեն կապված է մտա-

ծողության հետ, մտածողությունը անջատում են լեզվից և պնդում, թե լեզուն իր դարն ապրում է, որ առանց լեզվի էլ կարելի է յոլա գնալ:

Ուշադրություն դարձրեք Ն. Յա. Մառի հետևյալ խոսքերին.

«Լեզուն գոյություն ունի միայն՝ որքանով նա դրսևորվում է հնչյուններով, մտածողության գործողությունը տեղի է ունենում նաև առանց դրսևորման... Լեզուն (հնչյունային) այժմ արդեն սկսել է իր ֆունկցիաները զիջել նորագույն գյուտերին, որոնք անվերապահորեն հաղթում են տարածությունը, իսկ մտածողությունը առաջադիմում է անցյալում իր չօգտագործված կուտակումներից ու նոր նվաճումներից և կարող է տեղագրավել ու ամբողջովին փոխարինել լեզվին: Ապագա լեզուն մտածողությունն է, որն աճում է բնական մատերիայից զերծ տեխնիկայի մեջ: Նրա առջև չի դիմանա ո՛չ մի լեզու, նույնիսկ հնչյունայինը, որը այնուամենայնիվ, կապված է բնության նորմաների հետ» (տես Ն. Յա. Մառի «Ընտիր աշխատությունները»):

Եթե այս «մոգական-աշխատանք» խժդժաբանությունը թարգմանենք մարդկային հասարակ լեզվով, ապա կարելի է հանգել այն հետևությանը, որ՝

ա) Ն. Յա. Մառը մտածողությունն անջատում է լեզվից.

բ) Ն. Յա. Մառը կարծում է, որ մարդկանց հաղորդակցումը կարելի է իրագործել նաև առանց լեզվի, հենց մտածողության օգնությամբ, որը զերծ է լեզվի «բնական մատերիայից», զերծ է «բնության նորմաներից».

գ) Անջատելով մտածողությունը լեզվից և նրան «ազատելով» լեզվական «բնական մատերիայից», Ն. Յա. Մառը ընկնում է իդեալիզմի ճահիճը:

Ասում են, թե մտքերը մարդու գլխում ծագում են նախքան խոսքով արտահայտվելը, ծագում են առանց լեզվական նյութի, առանց լեզվական բաղադրիչների, այսպես ասած մերկ տեսքով: Բայց դա միանգամայն սխալ է: Ինչպիսի մտքեր էլ ծագեն մարդու գլխում, դրանք կարող են ծագել և գոյություն ունենալ միմիայն լեզվական նյութի բազայի վրա, լեզվական տերմինների ու ֆրազների բազայի վրա: Լեզվական նյութից զերծ, լեզվական «բնական մատերիայից» զերծ մերկ մտքեր գոյություն չունեն: «Լեզուն մտքի անմիջական իրողությունն է» (Մարքս): Մտքի ռեալությունը դրսևորվում է լեզվի մեջ: Միայն իդեալիստները կարող են խոսել լեզվի «բնական մատերիայի» հետ չկապված մտածողության մասին, առանց լեզվի մտածողության մասին:

Կարճ ասած՝ սեմանտիկայի գերագնահատումը և վերջինիս չարաշահումը Ն. Յա. Մառին հանգեցրել են իդեալիզմի:

Հետևաբար, եթե սեմանտիկան (սեմասիոլոգիան) պահպանվի այնպիսի չափազանցումներից ու չարաշահումներից, որպիսիք թույլ են տալիս Ն. Յա. Մառը և նրա որոշ «աշակերտներ», ապա այն կարող է լեզվաբանությանը մեծ օգուտ բերել:

3. ՀԱՐՑ: Դուք միանգամայն իրավացիորեն ասում եք, որ բուրժուաների և պրոլետարների գաղափարները, պատկերացումները, բարքերը և բարոյական սկզբունքները ուղղակի հակադիր են: Այդ երևույթների դասակարգային բնույթն անպայման անդրադարձել է լեզվի իմաստաբանական կողմի վրա (իսկ երբեմն էլ նրա ձևի՝ բառարանային կազմի վրա,— ինչպես հիշտ կերպով նշում է Ձեր հոդվածում): Կարելի՞ է արդյոք, վերլուծելով լեզվական կոնկրետ նյութը և, առաջին հերթին, լեզվի իմաստային կողմը, խոսել նրա արտահայտած հասկացողությունների դասակարգային էության մասին, հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ո՛չ միայն մարդու մտքի լեզվա-

կան արտահայտությանը, այլև մարդու վերաբերմունքին՝ իրականության նկատմամբ, որտեղ առանձնապես վառ կերպով է երևան գալիս նրա դասակարգային պատկանելիությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Կարճ ասած՝ Դուք ուզում եք իմանալ, թե արդյոք դասակարգերն ազդո՞ւմ են լեզվի վրա, արդյոք նրանք մտցնո՞ւմ են լեզվի մեջ իրենց սպեցիֆիկ բառերն ու արտահայտությունները, արդյոք լինո՞ւմ են դեպքեր, որ մարդիկ միևնույն բառերին ու արտահայտություններին տան տարբեր իմաստային նշանակություն՝ կախված դասակարգային պատկանելիությունից:

Այո՛, դասակարգերն ազդում են լեզվի վրա, լեզվի մեջ մտցնում են իրենց սպեցիֆիկ բառերն ու արտահայտությունները և երբեմն էլ տարբեր կերպով են ընկալում միևնույն բառերն ու արտահայտությունները: Այդ անտարակուսելի է:

Սակայն դրանից չի հետևում, որ սպեցիֆիկ բառերն ու արտահայտությունները, ինչպես նաև սեմանտիկայի մեջ եղած տարբերությունը, կարող են լուրջ նշանակություն ունենալ համաժողովրդական միասնական լեզվի զարգացման համար, որ դրանք ընդունակ են բուլացնելու նրա նշանակությունը կամ փոխելու նրա բնույթը:

Նախ, այդպիսի սպեցիֆիկ բառերն ու արտահայտությունները, ինչպես և սեմանտիկայի մեջ եղած տարբերությունների դեպքերն այնքան հիշ են լեզվի մեջ, որ դրանք հազիվ թե կազմեն լեզվական ամբողջ նյութի մեկ տոկոսը: Հետևաբար, բառերի ու արտահայտությունների մնացած հնչող մասսան, ինչպես և նրանց սեմանտիկան ընդհանուր են հասարակության բոլոր դասակարգերի համար:

Երկրորդ, դասակարգային երանգ ունեցող սպեցիֆիկ բառերն ու արտահայտությունները խոսքի մեջ օգտագործվում են ո՛չ թե ինչ-որ «դասակարգային» բերականության կանոններով, որը բնության մեջ գոյություն չունի, այլ գոյություն ունեցող համաժողովրդական լեզվի բերականության կանոններով:

Ուրեմն, սպեցիֆիկ բառերի ու արտահայտությունների առկայությունը և լեզվի իմաստաբանության մեջ եղած տարբերությունների փաստերը ո՛չ թե հերքում, այլ ընդհակառակը, հաստատում են համաժողովրդական միասնական լեզվի առկայությունն ու անհրաժեշտությունը:

4. ՀԱՐՑ: Ձեր հոդվածում Դուք միանգամայն հիշտ կերպով Մառին գնահատում եք որպես մարքսիզմը գրեհկացնողի: Այդ արդյոք նշանակո՞ւմ, է որ լեզվաբանները, այդ թվում նաև մենք՝ երիտասարդներս, պետք է դեն նետենք Մառի լեզվաբանական ամբողջ ժառանգությունը, որի մոտ, այնուամենայնիվ կան մի շարք արժեքավոր լեզվական հետազոտություններ (դրանց մասին դիսկուսիայի ժամանակ գրեցին ընկերներ Զիկոբավան, Սանժեևը և ուրիշները): Արդյոք մենք կարո՞ղ ենք, ինքնադատաբար մոտենալով Մառին, այնուամենայնիվ նրանից վերցնել օգտակարն ու արժեքավորը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Իհարկե, Ն. Յա. Մառի աշխատությունները կազմված չեն միայն սխալներից: Ն. Յա. Մառն ամենակոպիտ սխալներ էր թույլ տալիս, երբ նա մարքսիզմի տարրերը խեղաթյուրված ձևով էր մտցնում լեզվաբանության մեջ, երբ նա փորձում էր ստեղծել լեզվի ինքնուրույն թեորիա: Բայց Ն. Յա. Մառն ունի առանձին, լավ, տաղանդավոր կերպով գրված երկեր, որ-

տեղ նա, մոռանալով իր տեսական հավակնությունները, բարեխղճորեն և, պետք է ասել, հմտորեն հետազոտում է առանձին լեզուներ: Այդպիսի երկերում կարելի է գտնել ոչ-միչ արժեքավոր և ուսանելի բան: Հասկանալի է, որ այդ արժեքավորը և ուսանելին պետք է վերցվի Ն. Յա. Մառից և օգտագործվի:

5. ՀԱՐՑ: Սովետական լեզվաբանության մեջ եղած լճացման հիմնական պատճառներից մեկը շատ լեզվաբաններ համարում են ֆորմալիզմը: Շատ կցանկանայինք իմանալ Ձեր կարծիքն այն մասին, թե ո՞րն է ֆորմալիզմը լեզվաբանության մեջ և ինչպե՞ս հաղթահարել այն:

ՊԱՏԱՍԽԱՆ: Ն. Յա. Մառը և նրա «աշակերտները» «ֆորմալիզմի մեջ» մեղադրում են այն բոլոր լեզվաբաններին, որոնք չեն ընդունում Ն. Յա. Մառի «նոր ուսմունքը»: Այդ, իհարկե, լուրջ չէ և խելացի չէ:

Ն. Յա. Մառը թերականությունը համարում էր դատարկ «ձևականություն», իսկ այն մարդկանց, որոնք թերականական կառուցվածքը համարում էին լեզվի հիմքը՝ ֆորմալիստներ: Դա արդեն բոլորովին անմտություն է:

Ես կարծում եմ, որ «ֆորմալիզմը» հորինել են «նոր ուսմունքի» հեղինակները՝ լեզվաբանության մեջ իրենց հակառակորդների դեմ մղվող պայքարը հեշտացնելու համար:

Սովետական լեզվաբանության մեջ եղած լճացման պատճառը ո՛չ թե Ն. Յա. Մառի ու նրա «աշակերտների» հնարած «ֆորմալիզմն է», այլ արակչեևյան ռեժիմը և տեսական բացերը լեզվաբանության մեջ: Արակչեևյան ռեժիմն ստեղծել են Ն. Յա. Մառի «աշակերտները»: Լեզվաբանության մեջ տեսական խառնաշփոթություն են մտցրել Ն. Յա. Մառը և նրա մերձավոր զինակիցները: Որպեսզի լճացում չլինի, պետք է լիկվիդացնել թե՛ մեկը, և թե՛ մյուսը: Այս խոցերի լիկվիդացումը կառողջացնի սովետական լեզվաբանությունը, այն դուրս կբերի լայն ճանապարհ և սովետական լեզվաբանությանը հնարավորություն կտա առաջին տեղը գրավելու համաշխարհային լեզվաբանության մեջ:

Ի. ՍՏԱԼԻՆ

29 հունիսի, 1950 թ.
(«Բոլշեվիկ» ժուռնալ, № 12)